ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Մաքենիս բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում կայացած ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Մաքենիս բնակավայրի կրթահամալիրի կառուցման նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ 1-ին հանրային քննարկումների

2024թ-ի հոկտեմբերի 02-ին, ժամը 14:30-ին ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Մաքենիս բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում տեղի ունեցավ ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Մաքենիս բնակավայրի կրթահամալիրի կառուցման նախագծի և նախնական գնահատման հայտի վերաբերյալ 1-ին հանրային քննարկումը՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի պահանջների համաձայն: Հանրային քննարկումների հայտարարությունը հրապարակված է եղել «Առավոտ» օրաթերթի 2024 թ-ի օգոստոսի 31-ի համարում:

Հանդիպմանը մասնակցում էին Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամի, ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի և Մաքենիս բնակավայրի, նախագծող կազմակերպության («Լուք» ՍՊԸ), նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության մշակման և հանրային լսումների կազմակերպման պատասխանատու ընկերության («Ի ՍԻ Ի Քաուքազուս» ՍՊԸ) ներկայացուցիչները:

Վարդենիս համայնքի ղեկավարի օգնական **Ա. Եղիազարյանը** ողջունեց ներկաներին և ներկայացրեց հանդիպման նպատակը: Այնուհետև խոսքը փոխանցեց հանրային լսումների կազմակերպման պատասխանատու ընկերության ներկայացուցիչ Մ. Խաչատրյանին:

Մ. Խաչատրյանը ողջունեց մասնակիցներին և իրազեկեց ներկաներին, որ քննարկվող նախագիծը, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի համաձայն ենթակա է փորձաքննության, որի համար նախատեսվում է 2 հանրային քննարկում: Քննարկումների արդյունքում առաջացած առաջարկությունները հաշվի կառնվեն հետագա գործողությունների համար: Այնուհետև Մ. Խաչատրյանը ներկայացրեց ծրագրին և նախագծին վերաբերող որոշ մանրամասներ, հնարավոր բնապահպանական միջոցառումները և ներկաներին հորդորեց տալ հարցեր և ներկայացնել առաջարկներ, այնուհետև խոսքը փոխանցեց նախագծող կազմակերպության ներկայացուցիչ՝ Ս. Բաղդասարյանին:

Ս. Բաղդասարյանը ներկայացրեց կրթահամալիրի տեխնիկական և քանակային մանրամասները գծագրերի օգնությամբ:

Տ. Առաքելյանը հավելեց, որ կրթահամալիրը ապահովվելու է ֆոտովոլտային կայաններով, քանի որ համայնքը գազիֆիկացված չի:

Բնակիչներիչ մեկը հետաքրքվեց թե արդյոք դպրոցի և նախակրթարանի ճաշարանները կլինեն առանձին թե միասին:

Ս. Բաղդասարյանը հաստատեց, որ կլինեն առանձին ճաշարաններ:

Ներկաները քննարկեցին ջրամատակարարման հարցերը:

Ս. Գևորգյանը խնդրեց պարզաբանել կրթահամալիրի տեղադիրքը, արդյոք այն կկառուցվի նոր հատկացված տեղում:

Համայնքի ներկայացուցիչները պարզաբանեցին, որ հողակտորի սեփականության վկայականի տրամադրումը ընթացքի մեջ է:

Ս. Գևորգյանը խնդրեց նաև կրթահամալիրին մոտակա սեփականատերերին պահպանել զգուշավորության կանոնները շինարարական աշխատանքների ժամանակ:

Ս. Գևորգյանը խնդրեց դպրոցի ներկայացուցիչներին բացատրական աշխատանքներ անցկացնել աշակերտների հետ, որպեսզի խուսափեն շինհրապարակ մտնելուց: Ինչպես նաև հավելեց, որ Մաքենիս բնակավայրի բնակիչների ներգրավումը շինարարական աշխատանքների մեջ հանդիսանում է նաև սոցիալական մեղմացնող միջոցառում և պարտադիր պետք է կիրառվի: Հորդորեց բնակավայրի վարչական ղեկավարին կազմել համապատասխան մասնագետների ցուցակ: Տեղեկացրեց նաև, որ շինհրապարակում տեղադրված կլինեն բոլոր կոնտակտները և առաջարկությունների կամ բողոքների դեպքում բնակիչները կարող են դիմել:

Նախագիծը արժանացավ դրական գնահատականի Մաքենիս բնակավայրի բնակիչների կողմից:

Այլ հարցեր չհնչեցին և **Ա. Եղիազարյանը** ավարտեց քննարկումը:

Քննարկումների վարող և պատասխանատու՝
ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս
համայնքի ղեկավարի օգնական՝ Ա. Եղիազարյան

Ձեռնարկողի ներկայացուցիչ՝
«ԼՈՒՔ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Տ. Առաքելյան